ՄԱԿ - Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ «ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ N 1325 ԲԱՆԱՁԵՎԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 - 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ

Երևան 2020

ԶՈՀՐԱԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀՀ արտաքին գործերի նախարար

“

2020թ - ին նշվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» բանաձևի ընդունման 20-ամյակը: Ցավալիորեն այդ բանաձևի ընդունման օրվանից ի վեր աշխարհն ավելի անվտանգ չի դարձել, աշխարհի շատ ծայրերում մարդիկ դեռ շարունակում են առերեսվել իրականությանը, ուր իշխում են բռնությունը, խտրականությունը և ատելությունը: Մեր խորին համոզմունքն է, որ կանայք խաղաղությանը և անվտնագությանն ուղղված փոփոխությունների հզոր դերակատարներ են, և անվտանգությանն ուղղված ջանքերն առավել կայուն են, երբ կանայք հավասար գործընկերներ են հակամարտությունների կանխարգելման, կարգավորման և վերականգնման գործողություններում, ինչպես նաև կայուն խաղաղության հաստատմանը նպաստելու հարցում: Ուստի, նրանց մասնակցության ապահովումը հակամարտությունների կարգավորման գործում պարզապես գենդերային հավասարությանն ուղղված քայլ չէ, այն խաղաղության ու զարգացման հնարավորություններն ամրապնդելու գործիք է:

Բանաձևի ընդունման 20-ամյակին ընդառաջ պատեհ առիթ է գնահատելու առաջընթացը և նախանշելու հետագա քայլերը: 2019 թ - ի փետրվարին Հայաստանի կառավարությունը հաստատեց ՄԱԿ ԱԽ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձևի կիրարկման Գործողությունների առաջին ազգային ծրագիրը: Այսպիսով, Հայաստանը դարձավ ՄԱԿ 80-րդ անդամ պետությունը, որն ընդունեց գործողությունների ազգային ծրագիր: Գործողությունների ազգային ծրագիրն ընդունելուց առաջ Հայաստանի կառավարությունը և քաղաքացիական հասարակությունը յուրաքանչյուրն իր ձևաչափում քայլեր է ձեռնարկել

1325 բանաձևի դրույթների իրականացման ուղղությամբ: Այնուամենայնիվ, դա պարտավորվածությամբ համակարգված գործունեություն չէր: Գործողությունների ազգային ծրագրի մշակումը երկար գործընթաց էր, որի մեջ ներգրավված էին պետական կառույցները, քաղաքացիական հասարակությունը և միջազգային կազմակերպությունները: Արդյունքում մենք ունենք համապարփակ, համահունչ և համակարգված փաստաթուղթ, որտեղ պետությունը կարևոր դերակատարում ստանձնեց՝ որպես կանանց, խաղաղության և անվտանգության օրակարգի խթանման համար հիմնական պատասխանատու:

Մենք պետք է որդեգրենք նորարար, գենդերազգայուն մոտեցումներ՝ կանանց մասնակցությունը խոչընդոտող հիմնական սկզբնապատճառներին ու ռիսկի գործոններին արձագանքելու համար և ստեղծելու պայմաններ, որոնք վերջ կդնեն կանանց հանդեպ խտրականության արատավոր երևույթներին:

Որպես Մարդու իրավունքների խորհրդի 2020-2022 թվականների անդամ, Հայաստանն իր հանձնառությունների շարքում նշել է ՄԱԿ ԱԽ 1325 «Կանայք, խաղաղություն և անվտանություն» օրակարգի Գործողությունների ազգային ծրագրի կիրարկումը՝ դիտարկելով այն կարևոր գործիք կոնֆլիկտային գոտիներում բնակվող կանանց պաշտպանությունն ապահովելու և հակամարտությունների բոլոր փուլերում նրանց ակտիվ մասնակցությունն երաշխավորելու համար:

Միևնույն ժամանակ, մենք ուշադրության կենտրոնում ենք պահում 2020 թվականին տեղի ունեցած գլոբալ ճգնաժամի՝ COVID-19 համաճարակի, հետևանքների հաղթահարման հարցը: Կառավարությունը անում է հնարավորինը ճգնաժամի հետևանքները մեղմելու համար՝ գիտակցելով, որ համաճարակը լուրջ տնտեսական և սոցիալական ազդեցություն է ունեցել, ինչից առավել տուժել են հասարակության խոցելի խմբերը: COVID-19–ը իր անհամաչափ ծանր ազդեցությունն է ունեցել կանանց և աղջիկների վրա:

Բովանդակություն

Նախաբան	4
Մաս 1. «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգ.ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևը և հիմնասյուները	6
Մաս 2. ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացումը ԳԱԾ - երի միջոցով: Գործողությունների ՀՀ ազգային ծրագիր	11
Մաս 2.1 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	13
Մաս 2.2. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	15
Մաս 2.3. ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ	16
Մաս 2.4. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ	17
Մաս 2.5. ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևն ու Հայաստանի գործողությունները կանանց իրավունքների պաշտպանության համատեքստում	18
Մաս 3. «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը և տարբեր դերակատարների կողմից իրականացված աշխատանքները	19
Օգտագործված գրականության և էլ. հասցեների ցանկ	26
Օգտագործված հիմնական տերմինների բացատրություն	27
Հապավումների ցանկ	28

Նախաբան

Պատմականորեն կանայք միշտ մեծ ներդրում են ունեցել անվտանգության ապահովման և խաղաղության հաստատման գործընթացներում: Ամենաակնառու ապացույցներից մեկն է դեռևս 1915 թ – ին՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Հաագայում կայացած կանանց միջազգային համագումարը, որին մասնակցել են 12 ռազմատենչ և ոչ ռազմատենչ երկրներից ավելի քան 1300 կանայք, որպեսզի պահանջեն հակամարտող կողմերից վերջ դնել երկրներն ավերող պատերազմին: Հանդիպման արդյունքում ծնվեց Հանուն խաղաղության և ազատության կանանց միջազգային լիգան (Women's International League for Peace and Freedom[1]), որը մինչ օրս շարունակում է իր գործունեությունը:

1975 – 1995 թթ – ին[2] կայացան կանանց նվիրված մի շարք միջազգային համագումարներ ՄԱԿ – ի միջոցառումների շրջանակներում, որոնց ժամանակ ևս ընդգծվել է կանանց դերը հակամարտությունների հաղթահարման և խաղաղության հաստատման գործընթացներում: Ծնորհիվ կանանց համաշխարհային շարժման՝ հիմք դրվեց նաև կանանց իրավունքների վերաբերյալ կարևորագույն փաստաթղթի՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի մշակման գործընթացին: Կոնվենցիան ընդունվեց 1979 թ – ին և սկսեց գործել 1981 թ – ից:[3] 1995թ – ին Պեկինում կայացած Կանանց չորրորդ համաշխարհային կոնֆերանսի հիմնական թեմատիկ ուղղություններից մեկը ևս կանայք էին և խաղաղությունը: Ծուրջ մեկ դար տևած պայքարի արդյունքում ձևավորվեց «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը, որը փաստաթղթային հիմք ստացավ միայն 2000 թ–ի հոկտեմբերի 31 - ին՝ ՄԱԿ ԱԽ – ի 1325 բանաձևի ընդունմամբ:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովումը հանդիսանում է Հայաստանի երրորդ Հանրապետության առաջնահերթություններից մեկը: Անկախացումից կարճ ժամանակ անց Հայաստանը ստորագրեց, այնուհետև 1993 թ – ին վավերացրեց «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան: Ցայսօր ընդունվել են մի շարք օրենսդրական կարգավորումներ և ռազմավարություններ՝ ուղղված կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովմանը և գենդերային հիմքով բռնության կանխարգելմանն և պատժին: 2019 թ – ի սեպտեմբերի 19 – ին N 1334 – Լ ընդունվեց ՀՀ – ում գենդերային քաղաքականության իրականացման

2019 – 2023 թթ – ի ռազմավարության և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին կառավարության որոշումը:[4] Հավատարիմ մնալով բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման սկզբունքին՝ ՀՀ Կառավարությունը փետրվարի 28 – ին հաստատեց ՄԱԿ – ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2019 – 2021 թթ – ի ազգային ծրագիրը: Հայաստանի Հանրապետությունը, որպես ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովը 2020-2021 թթ - ին նախագահող երկիր, իր ներդրումն ունեցավ Պեկինի կոնֆերանսի 25-ամյակին նվիրված համաժողովի անցկացման գործում, որի ընթացքում ընդունված Քաղաքական հռչակագրում վերահաստատեց այն գաղափարը, որ խաղաղ գործընթացներում և միջնորդական ջանքերում որոշումներ կայացնելու բոլոր մակարդակներում կանայք պետք է ունենան լիարժեք, հավասար և բովանդակալից մասնակցություն:

Այսպիսով, սույն տեղեկատվական գրքույկի նպատակն է ընթերցողին ներկայացնել «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի կարևորագույն մեխանիզմ հանդիսացող ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի մասին տեղեկություն, «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2019-2021 թթ – ի ազգային ծրագրի էությունը, ինչպես նաև անդրադառնալ տարբեր դերակատարների ունեցած ներդրմանը բանաձևի լուսաբանման և գործողությունների ազգային ծրագրի ընդունման գործընթացներում:

ՄԱՍ 1

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգ. ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևը և հիմնասյուները

Վերջին երկու տասնամյակներում նկատելիորեն բարձրացել է միջազգային հանրության գենդերազգայունությունը զինված հակամարտությունների համատեքստում: Դրան նպաստել են միջազգային հանրության պայքարը և, իհարկե, միջազգային կառույցների կողմից ստեղծված իրավական մեխանիզմները: Այնուամենայնիվ, մինչ այս զարգացումները զինված հակամարտություններում և խաղաղաշինական գործընթացներում կանանց ունեցած դերի ու փորձի վերաբերյալ գիտական և մասնագիտական անդրադարձերը բավականին թույլ բնույթ են կրել:[5]

The HALO Trust

Աշխարհում ամենամեծ մարդասիրական կազմակերպությունն է, որը վերապատրաստում է տեղացի կանանց և նրանց աշխատանքի ընդունում մարդասիրական ականազերծման աշխատանքներում Լեռնային Ղարաբաղի համապատասխան տարածքներում:

Տևական ժամանակ գիտական գրականության մեջ և լրատվամիջոցներում առկա նյութերի զգալի մասը կնոջը զինված հակամարտությունների համատեքստում հիմնականում ներկայացրել է որպես «զոհ»՝ անտեսելով կնոջ ունեցած ներդրումը ինչպես զինված հակամարտություններում, այնպես էլ հետպատերազմական և խաղաղաշինական գործընթացներում: Նմանատիպ միտումներն ունեն իրենց տրամաբանական բացատրությունը. ռազմական հակամարտությունների ժամանակ բռնության կանխարգելմանն ու պատժմանն ուղղված մեխանիզմները թուլանում են, սրան զուգընթաց տեղի է ունենում գենդերային բռնության տարբեր դրսևորումների սրացում:[6,7] Ստորև ներկայացված են այն խնդիրներն ու մարտահրավերները, որոնց բախվում են կանայք ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված այլ ոճրագործությունների, ինչպես նաև զինված հակամարտությունների ժամանակ:[8,9]

Պատկեր 1. Հիմնական խնդիրներն ու մարտահրավերները

ԶՈՀԵՐ	• Ժամանակակից զինված հակամարտությունների ձևափոխման պատճառով (օր՝ զինտեխնիկայի արդիականացման և նոր զինտեխնիկայի ստեղծման պատճառով) պատերազմական զոհերի մոտավորապես 90% - ը կազմում է խաղաղ բնակչությունը, որից 90% - ը կանայք և աղջիկներն են:
ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ	• Կանայք և երեխաները կազմում են աշխարհի փախստականների ավելի քան 70% - ը: Որոշ դեպքերում այդ թիվը հասնում է 80% - ի (տես Սիրիայի օրինակը), երբեմն՝ 90% - ի:
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄ	• Ստիպողական հղիություն, • Սեռական օրգանների խեղում և ստերիլիզացիա, • Սեռավարակների, մասնավորապես ՄԻԱՎ - ի զանգվածային վարակումներ:
ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲՌՆԱԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	• Սեռական ստրկություն, • Կանանց նկատմամբ զանգվածային բռնաբարություններ, • Խմբային բռնաբարություններ, որոնք հաճախ ուղեկցվում են սպանությամբ կամ անդամահատությամբ:
ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲԱԶՄԱԿԻ ԴԵՐԵՐԻ ՍՏԱՆՁՆՈՒՄ	• Երեխաների և մեծահասակների խնամք, • Ռազմական բարդ իրավիճակներում պարենի հայթայթում, • Սոցիալական այլ կարիքների հոգում:
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԱՀԱՆ	• Զինված հակամարտությունների ժամանակ շարունակելով բնակվել շփման գծում՝ կանայք երեխաների և մեծահասակների հետ միասին դառնում են մարդկային վահան՝ մնալով առանց արդյունավետ պաշտպանության:

Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ կանանց պետք է դիտարկել միայն որպես զոհեր: Ինչպես ներկայացված է նաև Պատկեր 1 – ում, կանայք ստանձնում են ընտանիքի կենսապահովման կարևորագույն առաքելությունը ամենաքաոսային իրավիճակներում: Կանայք մասնակցում են զինված հակամարտություններին՝ որպես մարտիկներ:[10] Ամբողջ աշխարհում կանայք ակտիվ գործունեություն են ծավալում տարբեր համայնքներում, ինչպես նաև երկրում խաղաղության հաստատման ուղղությամբ, ստանձնում են ղեկավար պաշտոններ տարբեր ոլորտներում և այլն: Չնայած այս ամենին, անհերքելի փաստ է այն, որ կանայք բացակայում են որոշումների կայացման, հակամարտությունների կառավարման և կարգավորման, բանակցային և մի շարք այլ գործընթացներից:

Վերոնշյալ բացերը հանգեցրին այնպիսի մեխանիզմների ստեղծմանը, որոնք հնարավորություն են ընձեռում 1. ավելի արդյունավետ գործիքակազմով անդրադառնալ զինված հակամարտությունների ժամանակ կանանց հիմնախնդիրներին, 2. մեծացնել կանանց մասնակցությունը որոշումների կայացման և բանակցային գործընթացներում:

Այսպիսով, 2000թ – ի հոկտեմբերի 31 – ին Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 4213 – րդ նիստում ընդունվում է 1325 բանաձևը՝ միաձայն:[11] Բանաձևի ընդունումը շրջադարձային է «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի ձևավորման և խաղաղաշինական գործընթացներում կանանց և գենդերային հայեցակարգի ներառման տեսանկյունից: Բանաձևը վերահաստատում է կանանց ունեցած կարևոր դերը հակամարտությունների կանխարգելման և լուծման, բանակցային, խաղաղաշինական, խաղաղարարական և խաղաղապահական գործընթացներում, ինչպես նաև հետպատերազմական իրավիճակներում և վերականգնման աշխատանքներում: Այն ընդգծում է խաղաղության և անվտանգության պահպանման մեջ կանանց հավասար մասնակցության կարևորությունը: «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը, հենվելով միջազգային փորձի վրա, փաստում է, որ կանայք և տղամարդիկ զինված հակամարտություններից տուժում են հավասարապես, բայց տարբեր կերպ: Եվ հենց այս պատճառով էլ առաջացավ առանձին գործիքակազմ ունենալու անհրաժեշտությունը՝ կանանց հատուկ կարիքներին անդրադառնալու, ինչպես նաև նրանց փորձը մի շարք գործընթացներում ընդգրկելու համար:

Պատկեր 2 – ում ներկայացված են այն հիմնական առանձնահատկությունները, որոնք 1325 բանաձևը դարձնում են հիմնաքարային փաստաթուղթ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի շրջանակներում:

Պատկեր 2. ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի առանձնահատկությունները

Զինված հակամարտությունների համատեքստում կանանց դերի, մասնակցության և փորձի կարևորությանն անդրադարձող ՄԱԿ ԱԽ առաջին բանաձևն է:

Ճանաչում է կանանց՝ զինված հակամարտություններում ունեցած ակտիվ մասնակցությունը (ոչ միայն որպես մարտիկներ):

Կոչ է անում ՄԱԿ անդամ երկրներին ձեռնարկել համապատասխան քայլեր՝ կանանց մասնակցությունը որոշումների ընդունման, բանակցային և խաղաղաշինական ոլորտներում մեծացնելու ուղղությամբ:

Ստեղծում է «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի շուրջ զեկուցման համընդհանուր հարթակ:

Այս առումով հետաքրքրական է 1325 բանաձևի այն պարբերությունը, որում կոչ է արվում բոլոր պետություններին՝ վերջ դնելու անհիրավությանը ու պատժելու ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների, այդ թվում կանանց և աղջիկների դեմ ուղղված սեռական և այլ բռնությունների համար մեղավորներին՝ բացառելով համաներման հնարավորությունը:

ՄԱԿ ԱԽ - ի 1325 բանաձևը բաղկացած է 18 նպատակներից կամ դրույթներից: Դրանցից յուրաքանչյուրը կապված է բանաձևի չորս հիմնասյուներից մեկին: Դրանք են. մասնակցություն, պաշտպանություն, կանխարգելում և վերականգնում: Պատկեր 3 – ում ներկայացված են բանաձևի չորս հիմնասյուները՝ հիմնական նպատակների հետ միասին:

Պատկեր 3. ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի չորս հիմնասյուները



ԱԿ ԱԽ 1325 բանաձևի ընդունմամբ հիմք դրվեց «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգին: Սրանով իսկ բանաձևը դարձավ այս օրակարգի հիմնական, բայց ոչ միակ միջազգային իրավական մեխանիզմը: Ստորև ներկայացված են ՄԱԿ ԱԽ – ի կողմից ընդունված այն բանաձևերը, որոնք վերաբերում են «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգին և կոչված են էլ ավելի ուժեղացնել 1325 բանաձևի դրույթները: Բանաձևերը ներկայացված են Պատկեր 4 – ում:

Պատկեր 4. ՄԱԿ ԱԽ - ի կեղմից ընդունված և 1325 բանաձևին հարակից բանաձևերը

1820 ԲԱՆԱՁԵՎ (2008)	Պատերազմական իրավիճակում իրականացված սեռական բռնությունները ճանաչում է որպես պատերազմական մարտավարություն, պատերազմական զենք:
1888 ԲԱՆԱՁԵՎ (2009)	Ապահովում է 1820 - ի արդյունավետ իրականացումը, առազմական գոտիներում սեռական բռնության հիմնախնդիրների մասով Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի ինստիտուտի ստեղծումը:
1889 ԲԱՆԱՁԵՎ (2009)	Ընդգրկում է բանակցային գործընթացներում կանանց մասնակցության բարձրացման ռազմավարությունը և կոչ է անում ստեղծել ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացման արդյունավետության գնահատման ցուցիչներ:
1960 ԲԱՆԱՁԵՎ (2010)	Վերահաստատում է նախորդ բանաձևերում ստանձնած պարտավորությունները սեռական բռնության կանխարգելման մասով և մանդատ է տալիս անպատժելիության մթնոլորտի դեմ պայքարելու համար:
2106 ԲԱՆԱՁԵՎ (2013)	Կոչ է անում շահագրգիռ կողմերին, այդ թվում ԱԽ - ին, ձեռնարկել ավելի շատ քայլեր ավելի վաղ ընդունած բանաձևերի դրույթների իրականացման և անպատժելիության մթնոլորտի նվազեցման համար:
2122 ԲԱՆԱՁԵՎ (2013)	Ներդնում է ավելի ուժեղ մեթոդներ՝ հակամարտությունների լուծման գործընթացներում կանանց ներգրավվածությունը բարձրացնելու համար: Վերահաստատում է կանանց ունեցած անփոխարինելի դերը կայուն խաղաղության հաստատման համատեքստում:
2242 ԲԱՆԱՁԵՎ (2015)	«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը կապում է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենացիային: Անդրադառնում է ծայրահեղականության և ահաբեկչության դեմ պայքարում կանանց ունեցած դերին:
2272 ԲԱՆԱՁԵՎ (2016)	Միջոցներ է ապահովում խաղաղ գործողությունների իրականացման ժամանակ սեռական շահագործման և չարաշահման դեմ պայքարի համար:
2467 ԲԱՆԱՁԵՎ (2019)	Կոչ է անում հակամարտող կողմերին դադարեցնել սեռական բռնության կիրառումը իրենց մարտավարությունների մեջ և մշակել հատուկ մեխանիզմներ հանցագործների պատժման համար:

ՄԱՍ 2 | ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացումը ԳԱԾ - երի միջոցով: Գործողությունների ազգային ծրագիր՝ ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱԿ ԱԽ - ի կողմից 1325 բանաձևի ընդունմամբ անդամ երկրները վերահաստատեցին խաղաղության և անվտանգության կերտման գործում կանանց կարևորագույն դերը: 1325 բանաձևը կոչ է անում պետություններին ոչ միայն ճանաչել կանանց ներդրումները, այլև հստակ քայլեր ձեռնարկել՝ խաղաղության և անվտանգության պահպանման գործընթացներում կանանց մասնակցությունը մեծացնելու նպատակով:

Բանաձևի գոյությունը կարևոր, բայց բավարար պայման չէր անհրաժեշտ գործողությունների իրականացման համար: Հասկանալով այս հիմնախնդիրը՝ 2005 թ - ին Անվտանգության խորհուրդը հանձնարարեց անդամ երկրներին ստեղծել բանաձևի դրույթների իրականացման սեփական մեխանիզմները՝ գործողությունների ազգային ծրագրերը: ԳԱԾ - ն այնպիսի գործիքակազմ է, որն ապահովում է հստակորեն կառուցված գործողությունների ամբողջություն, որն էլ հնարավորություն է ընձեռում իրականացնել 1325 բանաձևի դրույթները և նպատակները:

Պատկեր 5. ԳԱԾ - երի առանձնահատկությունները[12]

- **Ստեղծվում է երկրի խնդիրների և առաջնահերթությունների հիման վրա**
- **Ստեղծվում է քաղհասարակության հետ համատեղ աշխատանքների միջոցով**
- **Ունի հստակ կառուցվածք՝ դերաբաշխումների և ժամանակացույցի հետ միասին**
- **Ունի մշտադիտարկման և գնահատման հստակ ծրագիր**

2020 թ - ի հունվար ամսի դրությամբ ՄԱԿ - ի 83 անդամ պետություններ (ՄԱԿ անդամ պետությունների 43% - ը) արդեն իսկ ունեն ԳԱԾ - եր:[13]

Այսպիսով, հաշվի առնելով այն, որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ու առաջխաղացումը, գենդերային հավասարության հաստատումը, ինչպես նաև ԼՂ հակամարտության բոլոր ցիկլերում կանանց ակտիվ դերակատարման ապահովումը համարվում է ՀՀ կարևորագույն առաջնահերթություններից, 2019 թ - ի փետրվարի 28 - ին

Կառավարությունն ընդունեց ՄԱԿ – ի ԱԽ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն N 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2019 – 2021 թվականների ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը»: Ծրագրի ստեղծման հիմքում ընկած է 2017 թ – ի մայիսի 4 – ի N483 - Ն որոշմամբ ՀՀ կառավարության կողմից ընդունված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017 – 2019 թթ – ի գործողությունների ծրագիրը, որի 76 – րդ կետը վերաբերում է 1325 բանաձևի դրույթների իրականացմանն ուղղված ԳԱԾ – ի մշակմանը: Ծրագրի ստեղծման հիմքում ընկած է նաև 2017 թ – ի սեպտեմբերի 13 – ին ՀՀ վարչապետի N 104 – Ա որոշումը, որով էլ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ ԳԱԾ – ի մշակման նպատակով: Այն հանգամանքը, որ ԳԱԾ-ն ընդունվել է Կառավարության որոշմամբ, վկայությունն է այն քաղաքական պատասխանատվության, որ իր վրա է վերցնում պետությունը՝ ԳԱԾ- ի իրականացման և հետագա շարունակականության ապահովման հարցում:

ԳԱԾ – ի ստեղծման աշխատանքների համակարգումն իրականացրել է Արտաքին գործերի նախարարությունը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ մինչև ԳԱԾ ունենալն այս ուղղությամբ Հայաստանը կատարել է զգալի աշխատանքներ թե՛ պետական կառույցների և թե՛ հասարակական կազմակերպությունների միջոցով, ինչի մասին և տեղեկացրել է ՄԱԿ-ին: Այսպես, 2017 թ – ի հունվարի 19 – ին որպես ՄԱԿ – ի պաշտոնական փաստաթուղթ (S/2017/54) շրջանառվել է Հայաստանի կողմից 1325 բանաձևի իրականացման վերաբերյալ զեկույցը: ԳԱԾ հիմնական նպատակն է աջակցել 1325 բանաձևի կիրարկմանն ու մշտադիտարկմանը, ինչպես նաև խթանել դրա իրականացումը հնարավոր բոլոր մակարդակներում՝ տեղական (բարձրացնելով բնակչության տեղեկացվածության մակարդակը՝ իրականացնելով զանազան իրազեկման ծրագրեր), ազգային (որպես մարդու իրավունքների ոլորտում պետության կողմից ճանաչված գերակայություն) և միջազգային (նպաստելով Հայաստանի ակտիվ ներգրավմանը միջազգային տարբեր կառույցների կողմից 1325 –ի իրականացմանը նպաստող գործունեության մեջ):

2020 թ - ի ապրիլի 23-ին ՀՀ վարչապետի N490-Ա որոշմամբ ստեղծվեց «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» թեմայով ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի 2019-2021 թթ - ի գործողությունների ազգային ծրագրի իրականացման և մշտադիտարկման հարցերով զբաղվող հանձնաժողով: Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է արտաքին գործերի նախարարությունը: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են ՀՀ Ազգային ժողովի, պաշտպանության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, արդարադատության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, էկոնոմիկայի, արտակարգ իրավիճակների նախարարությունների, ոստիկանության, Մարդու իրավունքների

պաշտպանի գրասենյակի, Հայկական կարմիր խաչի ընկերության, տարբեր հասարակական կազմակերպությունների և շահագիգիռ միջազգային կազմակերպությունների (UNFPA, UNHCR) ներկայացուցիչներ:

ՀՀ ԳԱԾ – ը բաղկացած է 18 հիմնական նպատակներից, որոնք վերաբերում են 1325 բանաձևի 4 հիմնասյուներին՝ մասնակցությանը, պաշտպանությանը, կանխարգելմանը, օժանդակությանը և վերականգմանը: ԳԱԾ – ի մեջ հստակորեն սահմանված են նպատակները, նպատակին հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները, միջոցառումների իրականացման ժամկետները, արդյունքային ցուցանիշները, պատասխանատու կատարողները/համակատարողները, ինչպես նաև ֆինասնական աղբյուրները:

ՄԱՍ 2.1 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կանանց, ինչպես նաև նրանց շահերի և կարիքների ներառումը որոշումների կայացման այն ոլորտներում և գործընթացներում, որոնք վերաբերում են հակամարտությունների կանխարգելմանը, կառավարմանը և լուծմանը (կանանց արդյունավետ մասնակցություն պաշտոնական և ոչ պաշտոնական բանակցային գործընթացներում, մասնակցության ապահովում խաղաղության և անվտանգության հաստատման և պահպանման առաքելություններում, որոշումների կայացման գործընթացներում և այլն):

Գործողությունների ազգային ծրագրի 1 - ին մասը նվիրված է կանանց մասնակցության բարձրացմանը տարբեր ոլորտներում: Հայաստանի Հանրապետությունը կարևորում է կոնֆլիկտային գոտիներում բնակվող կանանց մասնակցությունը հակամարտությունների կանխարգելման և կարգավորման գործընթացներում: Հայաստանի Հանրապետությունը ուշադրության կենտրոնում է պահում սահմանամերձ համայնքներում բնակվող կանանց մասնակցության ապահովումը տնտեսական, սոցիալական, կրթական և բնապահպանական ոլորտներում: Այս հատվածն իր մեջ ներառում է 7 նպատակ: Նպատակները՝ ստորև.

- **ԶՈՒ - երի ստորաբաժանումներում կանանց ներգրավվածության խթանում՝ հատուկ ուշադրություն դարձնելով խաղաղապահ առաքելություններին:**
- **Հակամարտությունների կանխարգելման, խաղաղաշինության և կարգավորման համար շահագրգիռ տարբեր կողմերի միջև համագործակցության խթանում:**
- **Աջակցություն ՀՀ Ոստիկանությունում գենդերային բաղադրիչի ներդրմանը:**
- **Տնտեսական, սոցիալական և այլ ոլորտներում կանանց մասնակցությունն ապահովող ծրագրերի խթանում:**
- **Քաղաքացիական անվտանգության մշակույթի ձևավորում հատկապես սահմանամերձ բնակավայրերում:**
- **Կանանց մասնակցության խթանում պաշտպանության համակարգում քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացներում:**
- **Սահմանամերձ բնակավայրերում տեղաբաշխված զորամասերի զինծառայողների կանանց սոցիալական ադապտացման աջակցություն:**

Վերը նշված նպատակներին հասնելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները. գենդերային հիմնախնդիրների շուրջ իրազեկվածության բարձրացում, տարբեր կողմերի կարիքների գնահատում, կանանց կարողությունների զարգացում, պաշտպանության համակարգում և խաղաղապահական առաքելություններում կանանց մասնակցության մեծացում: Նպատակների պատասխանատու կատարողներն են ՊՆ – ն, ԱԳՆ – ն՝ ԳԹԽ – ի համակարգող միջազգային կազմակերպության հետ միասին, ՀՀ Ոստիկանությունը, ԿԳՄՍ – ն, Բնապահպանության նախարարությունը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ ԱԻՆ – ը, Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը:

ՄԱՍ 2.2 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կանանց ֆիզիկական, հոգեբանական և հոգեկան առողջության, ինչպես նաև անվտանգության և իրավունքների պաշտպանություն: Սա ենթադրում է նաև գենդերազգայուն այնպիսի մեխանիզմների ստեղծում, որոնք կարող են մշտադիտարկել և գրանցել կանանց իրավունքների ոտնահարումները հակամարտության, զինադադարի, բանակցությունների և հետպատերազմական իրավիճակներում:

Գործողությունների ազգային ծրագրի 2 - րդ մասը վերաբերում է պաշտպանությանը: ԳԱԾ – ի այս հատվածն իր մեջ ներառում է 5 նպատակներ, որոնցից յուրաքանչյուրը կոչված է այս կամ այն ոլորտում ապահովել կանանց տարբեր սոցիալական խմբերի իրավունքների պաշտպանությունը և անվտանգությունը: Նպատակները՝ ստորև.

- **Հակամարտությունների ընթացքում կանանց և աղջիկների պաշտպանություն բռնությունից:**
- **ԼՂ հակամարտության ներգործությանը ենթարկված կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանության ապահովում:**
- **Տեղահանված կանանց և աղջիկների հատուկ պաշտպանության ապահովում:**
- **ԼՂ հակամարտությունից ազդեցություն կրած բնակավայրերում գտնվող կանանց և աղջիկների սոցիալ - տնտեսական իրավունքների պաշտպանություն:**
- **Արցախի Հանրապետության/Լեռնային Ղարաբաղ/ իշխանությունների հետ ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացման ուղղությամբ համագործակցություն:**

Նպատակներին հասնելու համար նախատեսված հիմնական միջոցառումներն են. միջազգային և ներպետական կառույցների հետ համագործակցություն՝ հակամարտությունների ժամանակ կանանց նկատմամբ բռնությունների կանխարգելման և բռնություն վերապրած կանանց և աղջիկներին պաշտպանություն տրամադրելու նպատակով, քննիչների, զինվորական դատախազների և դատավորների վերապատրաստումներ, բռնության ենթարկված կանանց ուղղորդման մեխանիզմների բարելավում, այս կանանց վերականգնողական և վերաինտեգրման ծրագրերի մշակում, հակամարտությունից տուժած կանանց կրթական կարիքների գնահատում և կրթության կազմակերպում, ՀՀ օրենքով սահմանված կարգով փախստականների կարգավիճակի և ապաստարանի տրամադրում և այլն: Նպատակների պատասխանատու կատարողներն են ՊՆ – ն, ԱԻՆ – ը, Ոստիկանությունը, Առողջապահության նախարարությունը, Տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայությունը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և այլն:

ՄԱՍ 2.3 ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Հակամարտության պատճառով առաջացած և բոլոր այլ տիպի կառուցվածքային և ֆիզիկական բռնությունների, հատկապես սեռական և գենդերային հիմք ունեցող բռնությունների նվազեցում: Այս դրույթը ենթադրում է այնպիսի մեխանիզմների առկայություն, որոնք կապահովեն կանանց և աղջիկների անվտանգությունը թե՛ պատերազմական, թե՛ խաղաղ պայմաններում: Կարևոր է նաև բռնություն վերապրած կանանց համար արդարադատության հասանելիության ապահովումը:

Ազգային ծրագրի 3 - րդ մասը անդրադառնում է 1325 բանաձևի հաջորդ հիմնասյունին՝ կանխարգելմանը: Այս հատվածն իր մեջ ընդգրկում է 4 նպատակ՝ ուղղված բռնության կանխարգելման համար տարբեր մեխանիզմների կիրարկմանը: Նպատակները՝ ստորև.

- **Սեռով պայմանավորված բռնության կանխարգելում:**
- **Կանանց, անվտանգության և խաղաղության թեմաներով իրազեկվածության բարձրացում:**
- **Կրթական կարողությունների զարգացում, 1325 բանաձևի վերաբերյալ տեղեկատվության ներառում կրթական ծրագրերում:**
- **Ռազմական ոստիկանության, ՔԿ ՀՔԳՎ և զինդատախազության աշխատակիցների իրազեկվածության բարձրացում:**

Նպատակների իրականացման համար նախատեսված են հետևյալ միջոցառումները. տեղեկատվական-ուսուցողական միջոցառումների կազմակերպում խաղաղապահ ուժերի և ռազմական ոստիկանության անձնակազմերի համար, համաձայնության առկայության դեպքում նաև քննչական կոմիտեի և զինդատախազության ներկայացուցիչների համար: 1325 բանաձևի և կանանց իրավունքներին վերաբերող այլ միջազգային փաստաթղթերի մասին իրազեկման աշխատանքների իրականացում, կրթական հաստատություններում իրազեկվածության բարձրացում բանաձևի և «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի գործիքակազմի շուրջ և այլն: Այս նպատակների իրականացման հիմնական պատասխանատու կողմերն են ՊՆ – ն, Ոստիկանությունը, Արդարադատության նախարարությունը, ԱԳՆ – ն, ԿԳՄՍ – ն:

ՄԱՍ 2.4 ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Այս հիմնասյունը ենթադրում է կանանց և աղջիկների կարիքների գնահատում հակամարտության և հետպատերազմական ժամանակահատվածներում: Կարևոր է հատկապես առավել խոցելի խմբերի՝ սեռական և գենդերային հիմքով բռնություն վերապրածների, կին նախկին մարտիկների, փախստականների և այլոց համար օժանդակության տրամադրումը, վերականգնողական և վերաինտեգրման ծրագրերի իրականացումը: Հետպատերազմական իրավիճակներում վերականգնողական աշխատանքների մեջ (անցումային արդարադատություն, զինաթափում, երկխոսություններ և այլն) կանանց ներգրավումը:

Գործողությունների ազգային ծրագրի վերջին՝ չորրոդ մասն անդրադառնում է բանաձևի 4 – րդ հիմնասյունին՝ օժանդակությանն ու վերականգնմանը: Այս հատվածը ունի երկու հիմնական նպատակներ, որոնք ուղղված են կանանց աջակցության ցուցաբերմանը և կանանց իրավունքների պաշտպանությանը: Նպատակները՝ ստորև.

- **Գնահատման արդյունքների հիման վրա տեղահանված և տեղահանման վտանգի տակ գտնվող կանանց սոցիալ - հոգեբանական և իրավաբանական աջակցության ցուցաբերում:**
- **Պաշտպանության համակարգում կանանց իրավունքների պաշտպանության և հավասար հնարավորությունների ապահովման մշակույթի ձևավորում և դրա պաշտպանության մշադիտարկման մեխանիզմների ներդրում:**

Սույն նպատակներին հասնելու համար նախ և առաջ նախատեսվում է միջազգային և տեղական կազմակերպությունների հետ համագործակցություն՝ տեղահանված և տեղահանման վտանգի տակ գտնվող կանանց, աղջիկների և նրանց ընտանիքների կարիքների գնահատման, ինչպես նաև ՀՀ – ում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց համար ինտեգրման ծրագրերի ներդրման համար: Նախատեսվում է հասարակության տարբեր շրջանակների հետ հանդիպումների և համաժողովների անցկացում (նաև միջազգային փորձագետների մասնակցությամբ)՝ խաղաղության և անվտանգության ոլորտներում կանանց դերի մասին իրազեկելու նպատակով: Նպատակների իրականացման պատասխանատու կատարողներն են Տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայությունը, ՊՆ – ն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

ՄԱՍ 2.5 ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևն ու Հայաստանի գործողությունները կանանց իրավունքների պաշտպանության համատեքստում

Հայաստանը, որպես միջազգային հանրության անդամ, ինչպես աշխարհի շատ այլ պետություններ, պատասխանատվություն է ստանձնել կանանց իրավունքների հարգման ու առաջխաղացման հարցում: Այդ պատասխանատվությունը Հայաստանն ի կատար է ածում՝ ապահովելով կանանց իրավունքների վերաբերյալ միջազգային հիմնարար փաստաթղթերի կիրարկումը, որոնց շարքում են «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ - ի կոնվենցիան, Պեկինի հռչակագիրն ու գործողությունների ծրագիրը, «Կայուն զարգացման 2030 օրակարգ» - ի նպատակները[14] և այլ կարևոր փաստաթղթեր: Այս փաստաթղթերը հիմք են ծառայում կանանց իրավունքների և գենդերային հավասարության ոլորտում բազմաթիվ ազգային ծրագրերի մշակման համար: Ընդ որում, կանանց իրավունքներին վերաբերող բոլոր ազգային ծրագրերի մշակումն ու իրականացումը կրում է շարունակական բնույթ: ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի ԳԱԾ - ը ևս մեր կողմից դիտարկվում է հենց այս համատեքստում՝ որպես կանանց իրավունքների ամրապնդման ու նրանց մասնակցությունը խթանելու կարևոր գործիք և ազգային օրակարգի մաս: ԳԱԾ-ն անդրադառնում է ՀՀ անվտանգության խնդիրներին և խաղաղության գերակայություններին: Եթե հակիրճ նկարագրենք ՀՀ նպատակները 1325 բանաձևի իրականացման համատեքստում, ապա պետք է նշենք դրանցից հետևյալները.

Խթանել փորձի փոխանակումը ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:

Համագործակցել հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ:

Իրականացնել համատեղ աշխատանքներ ԳԱԾ - ում ընդգրկված բոլոր շահագրգիռ կառույցների հետ, այդ թվում իրազեկման արշավների միջոցով:

Ամրապնդել ԳԱԾ հաշվետվողականությանն ուղղված աշխատանքները:

Ուշադրության կենտրոնում պահել առավել խոցելի խմբերի կարիքները:

ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի ԳԱԾ-ը թույլ կտա մեր առջև դրված խնդիրներն իրականացնել ավելի համապարփակ և համակարգված ձևով:

ՄԱՍ 3 «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը և տարբեր դերակատարների կողմից իրականացված աշխատանքները

ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի ՀՀ ԳԱԾ - ի ստեղծումը և իրականացումը ներկայացնում են այնպիսի գործընթաց, որն ուղղված է ոչ միայն իրավական մեխանիզմների ստեղծմանը, այլև թիրախային տարբեր նախաձեռնությունների և հանրային միջոցառումների իրականացմանը: ԳԱԾ - ի ընդունումից ի վեր Հայաստանում պետական և ոչ պետական հաստատությունների կողմից կատարվել են մի շարք միջոցառումներ, որոնցից որոշները հատկանշական են:

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն. միջազգային և հայաստանյան փորձը», մարտի 15, 2019

2019 թ - ի մարտի 11 - ին Հայաստանում մեկնարկեց ամենամյա «ՆԱՏՕ - ի շաբաթ» - ը, որի նպատակն է հանրային դիվանագիտության միջոցառումների միջոցով իրազեկել Հայաստան - ՆԱՏՕ հարաբերությունների մասին:15 Նշված շաբաթվա միջոցառումների շարքում իր տեղը գտավ նաև ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի ՀՀ ԳԱԾ - ի ներկայացումը: Այսպիսով, ՀՀ ԳԱԾ - ի պաշտոնական ներկայացման, ԳԱԾ - ի մասին շահագրգիռ կողմերի և հանրային իրազեկվածության բարձրացման

նպատակով 2019 թ - ի մարտի 15 - ին Արտաքին գործերի նախարարությունում կայացավ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն. միջազգային և հայաստանյան փորձը» քննարկումը, որի պաշտոնական բացումը կատարեց ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը:16 Հանդիպման պատվավոր հյուրերն էին ՆԱՏՕ – ի՝ Կանանց, խաղաղության և անվտանգության հարցերով

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն. միջազգային և հայաստանյան փորձը», մարտի 15, 2019

հատուկ ներկայացուցիչ Կլեր Հաթչինսոնը,[17] Հայաստանում ՄԱԿ – ի մշտական համակարգող Շոմբի Շարփը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը, դեսպանատների և միջազգային կառույցների, քաղհասարակության ներկայացուցիչներ, միջազգային փորձագետներ և այլոք: ՀՀ ԱԳՆ – ի Մարդու իրավունքների և հումանիտար հարցերի վարչության պետ Կարինե Սուջյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԾ – ը՝ անդրադառնալով դրա հիմնական նպատակներին, ակնկալվող արդյունքներին և հետագա անելիքներին: Հանդիպման ժամանակ իրենց փորձով կիսվեցին նաև Վրաստանից ժամանած փորձագետները:

Ինչպես արդեն նշվել է ԳԱԾ – ի ստեղծման աշխատանքներում իրենց ներդրումն են ունեցել նաև ոլորտում ակտիվ հասարակական կազմակերպությունները: ԱԳՆ – ի կողմից կազմակերպված այս քննարկումը հարթակ ստեղծեց ՀԿ – Կառավարություն առավել լայն երկխոսության համար «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի շուրջ: Նմանատիպ ձևաչափով հանդիպման կազմակերպումը ոչ միայն ևս մեկ անգամ ապացուցեց ՀՀ Կառավարության հավատարմությունը «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի մասով որդեգրած սեփական քաղաքականության նկատմամբ, այլև հիմք հանդիսացավ հանրային այլ կարևոր միջոցառումների իրականացման համար:

2019 թ – ի դեկտեմբերի 4 – ին Երևանում կայացավ «Կանանց դերը խաղաղության հաստատման հարցում. հնարավորություններ և մարտահրավերներ» համաժողովը, որի նպատակն էր քննարկել ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի ՀՀ ԳԱԾ – ի 18-րդ նպատակը՝ ուղղված պաշտպանության համակարգում կանանց իրավունքների ապահովման հեռանկարների և հնարավորությունների քննարկմանը, հավասար հնարավորությունների մշակույթի ձևավորմանը և դրա պաշտպանության մշտադիտարկման մեխանիզմների ներդրմանը:[18] Համաժողովի պաշտոնական բացումը կատարեց ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը: Համաժողովի առաջին մասում ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը ներկայացրեց «Կանայք հանուն խաղաղության» արշավը, որն ունի գրեթե երկու տարվա պատմություն: Ինչպես ներկայացրեց տիկին Հակոբյանը, արշավն ունի հետևյալ ուղերձը. «Ղարաբաղյան հակամարտության բոլոր կողմերին, միջնորդներին որպես կին և մայր հորդորել և պահանջել Ղարաբաղյան հակամարտության պարագայում երբևէ չգնալ ռազմական ճանապարհով, թույլ չտալ ռազմական գործողություններ և փորձել հակամարտությունը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով, բանակցային սեղանի շուրջ»:[19] Ինչպես երևում է ուղերձից, արշավի նպատակն է մարդկային նոր զոհերի կանխարգելումը: Այնուհետև տեղի ունեցան պանելային քննարկումներ՝ ուղղված չլուծված հակամարտություններում կանանց իրավիճակին, առկա հնարավորություններին և մարտահրավերներին, շահագրգիռ տարբեր կողմերի միջև համագործակցության հնարավորություններին, ոլորտում արդեն իսկ կատարված աշխատանքներին և այլն: Հանդիպման պատվավոր հյուրերն էին Հայաստանում ՄԱԿ – ի մշտական համակարգող Ծոմբի Ծարփը, միջազգային փորձագետներ, ՀԿ ներկայացուցիչներ և այլոք:



«Կանանց դերը խաղաղության հաստատման հարցում. հնարավորություններ և մարտահրավերներ», դեկտեմբերի 4, 2019 թ.

ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևը կոչ է անում կանանց հավասար մասնակցության ապահովում որոշումների կայացման, բանակցային, հակամարտությունների կառավարման և հաղթահարման գործընթացներում, ինչպես նաև անվտանգության և պաշտպանության ապահովման և խաղաղապահական առաքելություններում:

ՀՀ Պաշտպանության նախարարությունը, հանդիսանալով ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի ՀՀ ԳԱԾ – ի մի շարք դրույթների կատարող և որոշ դրույթներով համակատարող, իրականացրել է բազմաթիվ միջոցառումներ՝ ուղղված զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում և հատկապես խաղաղապահ առաքելություններում կանանց ներգրավման նախաձեռնությունների խթանմանը, հակամարտությունների ժամանակ կանանց պաշտպանությանը գենդերային հիմք ունեցող բռնությունից և այլն:

Հատկանշական են ՊՆ – ի կողմից իրականացված գիտահետազոտական աշխատանքները, որոնք ուղղված են կանանց զինվորական ծառայության վերաբերյալ հասարակության տարբեր շերտերում առկա ընկալումներին, կին զինծառայողների կերպարին և դերին: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփված են «Պաշտպանության ոլորտում կանանց ներգրավվածության և մասնակցության հնարավորությունների ընդլայնման հեռանկարը» գրքում: ՊՆ – ի կողմից նաև հրատարակվել է «Կինը և բանակը» աշխատությունը, որտեղ սոցիոլոգիական, զինվորաքաղաքացիական և սոցիալ – մշակութային տեսանկյունից ներկայացվել է երկու կարևոր հիմնախնդիր՝ զինված ուժերում կանանց ներգրավումը և պետության պաշտպանության գործում կանանց մասնակցությունը:

ԳԱԾ – ի դրույթների կատարման նպատակով թիրախային տարբեր խմբերի, հատկապես կին զինծառայողների համար ՊՆ – ն կազմակերպել

Քննարկում՝ նվիրված ՀՀ ՊՆ և ՄԱԿ – ի բնակչության հիմնադրամի համագործակցության 2019 թ – ի ծրագրի միջոցառումների ամփոփմանը

է վերապատրաստման դասընթացներ, իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ՝ խաղաղապահ առաքելություններում կանանց ներգրավման բարդությունների պատճառների վերհանման նպատակով, պատրաստվել են «Ինչպես ես դարձա խաղաղապահ» խորագիրը կրող հոլովակներ կին զինծառայողների մասին, զինծառայողների համար կազմակերպվել են կանանց իրավունքների և հիմնախնդիրների շուրջ իրազեկման դասընթացներ և այլն:

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը մեծ կարևորություն է տալիս կանանց մասնակցությանը հատկապես խաղաղապահ առաքելություններում: Հատկանշական է այն, որ 2018 թ - ի համեմատ 2019 թ - ին խաղաղապահ բրիգադի կազմում կին զինծառայողների թվաքանակը աճել է շուրջ 8%-ով, իսկ ՄԱԿ-ի և ՆԱՏՕ-ի խաղաղապահ գործողություններին մասնակցող ԶՈՒ ստորաբաժանումների կազմում ընդգրկվածների թիվը՝ շուրջ 60%-ով: Ներկայումս կանանց խաղաղապահ դասակի զինծառայողները հայկական խաղաղապահ զորախմբի կազմում ներգրավված են ՆԱՏՕ-ի «Կոսովոյի ուժեր» (Կոսովո, KFOR) և «Վճռական աջակցություն» (Աֆղանստանի Իսլամական Հանապետություն, Resolute support) խաղաղապահ առաքելություններում, ինչպես նաև Լիբանանի Հանրապետությունում ՄԱԿ-ի հովանու ներքո իրականացվող UNIFIL խաղաղապահ առաքելությունում (United Nations Interim Force in Lebanon): ՊՆ – ն իրականացրել է նաև հանրային միջոցառումներ, կլոր սեղան քննարկումներ և այլն:

ՀՀ Գործողությունների ազգային ծրագիրը միավորում է պետական մարմիններին, հասարակական կազմակերպություններին, ԼՂ հակամարտության ներգործությանը ենթարկված, ինչպես նաև Հայաստանի սահմանամերձ գոտիներում բնակվող կանանց, ինչը հնարավորություն է ստեղծում ճիշտ գնահատել ներկայիս ռիսկերը և բարձրացնել բնակչության իրազեկվածության մակարդակը: Ծրագիրն իր ուշադրության կենտրոնում է պահում ազգաբնակչության

«Կանայք բանակցային սեղանի շուրջ՝ առավել արդար մոտեցում բոլորի համար» համաժողով, «Դեմոկրատիան այսօր» ՀԿ, հունիս, 2019 թ.

առավել խոցելի խմբերին և օգնում է բարձրացնել վերջիններիս քաղաքացիական պաշտպանվածության մակարդակը, սոցիալական - տնտեսական իրավունքների ապահովումը:

Հայաստանի Հանրապետությունն առաջնորդվում է մարդու իրավունքների համընդհանրության մոտեցմամբ, ինչպես դա ընդգծված է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Համընդհանուր հռչակագրում (հոդված 2). «որևէ տարբերակում չպետք է դրվի՝ ելնելով անհատի, երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից, լինի դա անկախ, խնամարկյալ, ոչ ինքնավար կամ որևէ այլ սահմանափակումով պետական կազմավորում»: Այս սկզբունքի ապահովումն առավել կարևոր է հումանիտար արձագանքման համատեքստում, երբ պետք է օգնություն ցուցաբերվի ռազմական գործողություններից տուժած խաղաղ բնակչությանը: Հետևաբար, ԳԱԾ-ն առանձին կետով անդրադառնում է տեղահանված կանանց և աղջիկների պաշտպանության հարցերին:

Նշված բոլոր նպատակների իրականացման հարցում կարևոր ներդրում ունի նաև քաղհասարակությունը և հատկապես կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները, խմբերը, անհատները և այլք: Երկար տարիների ընթացքում մի շարք կազմակերպություններ և կանանց խմբեր իրականացրել են խաղաղաշինական նախաձեռնություններ և ծրագրեր, աշխատել են հակամարտությունից ուղղակիորեն տուժած կանանց տարբեր խմբերի հետ, շահագրգիռ տարբեր կողմերի միջև հանդիսացել են կապող օղակ, բարձրաձայնել են ԼՂ հակամարտությունից տուժած կանանց և երեխաների հիմնախնդիրները, իրականացրել են բազմաթիվ ծրագրեր սահմանամերձ շրջաններում և այլն:

Հատկանշական է դեռևս 2013 թ – ին ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի մշտադիտարկման խմբի ձևավորումը: 20 Խմբի աշխատանքներն ուղղված են եղել ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի

ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի քաղաքացիական հասարակության 2013 թ – ի մշտադիտարկման զեկույցի ներկայացում

ՀՀ ԳԱԾ - ի ստեղծմանը՝ մշտադիտարկման զեկույցների ստեղծման և դրա հետագա ջատագովության միջոցով: Հատկանշական է, որ զեկույցներն անդրադարձ են կատարում ոչ միայն ՀՀ – ում, այլև Արցախում/Լեռնային Ղարաբաղում բնակվող կանանց իրավիճակին: Մի շարք կազմակերպություններ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը ներառել են իրենց աշխատանքային օրակարգի մեջ՝ որպես գործունեության հիմնական ուղղություններից մեկը:

ՀԿ – ներն իրականացրել են ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի և ԳԱԾ – ի տեղայնացմանն ուղղված ծրագրեր, կազմակերպել են բազմաթիվ դասընթացներ՝ տարբեր խմբերի շրջանակներում «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի, ինչպես նաև հակամարտությունից տուժած կանանց հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ: Քաղհասարակության ներկայացուցիչների կողմից կազմակերպվում են ամենամյա մրցանակաբաշխություններ, համաժողովներ, կլոր սեղան քննարկումներ և այլն: Հատկապես կարևոր են այն ծրագրերը, որոնք ուղղված են Հայաստանի և Արցախի/Լեռնային Ղարաբաղի կանանց և երիտասարդների միջև կապի ստեղծմանը և համագործակցությանը:

Այսպիսով, ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի դրույթների իրականացմանն ուղղված ԳԱԾ – ի ընդունմամբ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի համար բացվել է մի նոր փուլ, քանի որ ի շնորհիվ այս գործիքակազմի այլևս հնարավոր է դարձել իրականացնել համակարգված և հստակ նպատակներ հետապնդող գործողություններ, որոնց արդյունքները կլինեն առավել արդյունավետ և տեսանելի՝ կանանց որոշումների կայացման, բանակցային, հակամարտությունների կառավարման և հաղթահարման, ինչպես նաև պաշտպանության և անվտանգության ապահովման աշխատանքներում ներառելու տեսանկյունից:

Օգտագործված գրականության և էլ. հասցեների ցանկ

1. https://www.wilpf.org/, բացվել է 14.05.2020
2. https://www.peacewomen.org/why-WPS/solutions/background, բացվել է 14.05.2020
3. https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/CEDAW.aspx, բացվել է 14.05.2020
4. http://www.irtek.am/views/act.aspx?aid=151906, բացվել է 14.05.2020
5. Enloe, C. (2000). Maneuvers: The International Politics of Militarizing Women's Lives. Berkeley: University of California Press.
6. Bopst, C. (1998). Rape Shield Laws and Prior False Accusations of Rape: The Need for Meaningful Legislative Reform. Journal of Legislation.
7. Carey, H. (2001). Women, peace and security: The politics of implementing gender sensitivity in peacekeeping. London: Frank Cass Press.
8. https://www.middleeastmonitor.com/20200305-un-over-80-of-syria-refugees-are-women-and-children/, բացվել է 14.05.2020
9. https://www.un.org/womenwatch/daw/followup/session/presskit/fs5.htm, բացվել է 14.05.2020
10. McKay, S., & D., M. (2004). Where are The Girls? Girls in Fighting Forces in Northern Uganda, Sierre Leone and Mozambique. Montreal.
11. https://www.un.org/womenwatch/osagi/wps/, բացվել է 14.05.2020
12. Lippai, Z., Young, A. (2017). Creating National Action Plan: A Guide to Implelemting Resolution 1325 https://www.inclusivesecurity.org/wp-content/uploads/2018/09/InclusiveSecurity_NAP-Guide_ME_2017.pdf, բացվել է 14.05.2020
13. https://www.peacewomen.org/member-states, բացվել է 14.05.2020
14. https://www.un.am/hy/p/sustainabledevelopmentgoals, բացվել է 14.05.2020
15. https://www.mfa.am/hy/international-organisations/3, բացվել է 14.05.2020
16. https://www.mfa.am/hy/speeches/2019/03/15/fm_speech_nato_week/9231, բացվել է 14.05.2020
17. https://www.mfa.am/hy/press-releases/2019/03/14/fm_mnatsakanyan-hutchinson/9228, բացվել է 14.05.2020
18. http://www.mlsa.am/?p=24443, բացվել է 14.05.2020
19. https://medialab.am/32700/, բացվել է 14.05.2020
20. https://www.swv.am/index.php/hy/what-we-do-am/latest-am/47-uncategorised-2/888-un-scr-monitoring-group-prepared-their-third-report, բացվել է 14.05.2020

Օգտագործված հիմնական տերմինների բացատրություն

Խաղաղություն

Զինված հակամարտությունների համատեքստում ունի երկու հիմնական սահմանում՝ բացասական և դրական։

Բացասական սահմանում. իրավիճակ կամ ժամանակահատված, երբ չկա պատերազմ։

Դրական սահմանում. իրավիճակ, երբ մարդիկ ի վիճակի են լուծել իրենց կոնֆլիկտներն առանց բռնության, կարողանում են աշխատել միասին՝ կյանքի պայմանները բարելավելու ուղղությամբ։

Խաղաղարարություն

Գործընթացը թիրախավորում է ընթացքի մեջ գտնվող զինված հակամարտություն-ները և սովորաբար իր մեջ ընդգրկում է դիվանագիտական կամ այլ այն բոլոր քայլերը, որոնք ուղղված են հակամարտող կողմերին համաձայնության բերելուն։

Խաղաղաշինություն

Համընդգրկուն և երկարաժամկետ գործընթաց է, որը հակամարտությունների կառավարման բոլոր մակարդակներում հասարակությունների կարողությունների զարգացման միջոցով հետապնդում է կայուն խաղաղության և անվտանգության հաստատման, ինչպես նաև զինված հակամարտությունների վերսկսման բացառման նպատակները։

Խաղաղապահություն

Միտված է հեշտացնելու կոնֆլիկտային իրավիճակից խաղաղ վիճակին անցնելու գործընթացը։ Իրականացվում է խաղաղապահ զորքերի միջոցով։ ՄԱԿ - ի խաղաղապահական առաքելություններն ունեն երեք կարևոր սկզբունք. հակամարտող կողմերի համաձայնության առկայություն առաքելությունն իրականացնելու համար, անկողմնակալություն և ուժի կիրառում միայն այն դեպքում, երբ ինքնապաշտպանության կամ առաքելության հիմնական նպատակի պաշտպանության խնդիր կա։

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգ

Համարվում է արդյունավետ այնպիսի գործիքակազմ, որը հակամարտությունների կառավարման և հաղթահարման գործընթացներում գենդերային բաղադրիչի և գենդերազգայուն մոտեցման ընդգրկման միջոցով հետապնդում է գենդերային արդարության և կայուն խաղաղության հաստատման նպատակները։

ՄԱԿ ԱԽ բանաձևեր

ՄԱԿ – ի բանաձև է, որն ընդունվում է ԱԽ – ի 15 անդամ պետությունների կողմից և համարվում է ԱԽ – ի պաշտոնական դիրքորոշումն ու կարծիքն արտահայտող փաստաթուղթ։ ԱԽ – ի բանաձևերի հիմնական նպատակներից են միջազգային խաղաղության և անվտանգության ապահովումը։

Հապավումների ցանկ

ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱԽ	Անվտանգության խորհուրդ
ԳԱԾ	Գործողությունների ազգային ծրագիր
ԳԹԽ	Գենդերային թեմատիկ խումբ
ՁՈՒ	Զինված ուժեր
ԼՂ	Լեռնային Ղարաբաղ
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՆԱՏՕ	Հյուսիս – ատլանտյան պայմանագրի կազմակերպություն
ՊՆ	Պաշտպանության նախարարություն